

20(343)  
04.07.2013

Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

# ԼՍԻՄԱՐ

Ճանաչել գիմաստությունն եւ գիրքար, իմանալ զբանս հանձարոյ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

## ԵՐԲ ԱՍՏԱՆԱՆ, ԻՐՈՔ, ՍԱՐՍԱՓԵԼԻ

Վերջերս թե՛ տեղական մամուլում և թե՛ մասնավոր գրույցներում հաճախակի է հոլովվում Ադրբեջանի պաշտպանական և հարձակողական զինանոցն արդիական գեներալ և, մասնավորապես, զանգվածային ոչնչացման գեներալ համարվելու մասին: Խոսքը տվյալ դեպքում «Սմերչ» տեսակի հրթիռային կայանքի մասին է, որի ռազմատեխնիկական բնութագիրը պարզապես չափազանցված է: Ավագ սերնդի ներկայացուցիչները քաջ հիշում են 1990-ականների սկիզբը, երբ դարձյալ խոսվում էր Ադրբեջանական բանակի զինանոցում հայտնված «աիեղ» գեներալի՝ «Գրադի» մասին: Արցախյան պատերազմի ընթացքում նույն այդ կայանքից արձակված հազարավոր հրթիռներ են պայթել Ստեփանակերտում և Արցախի մյուս բնակավայրերում, բայց այդ հրթիռները (և ոչ միայն) բնավ խուճապ չեն առաջացրել բնակչության մոտ: Ավելին, մեր ինքնապաշտպանական ուժերը կարողացել են առնապարհակալ վնասագերծել ազդերի ռազմական հենակետերը՝ ոչնչացնելով կամ առգորավելով հակառակորդի հրթիռային ու հրետանային բազմաթիվ կայանքներ:

Ներկայումս ԼՂՀ պաշտպանության բանակն ունակ է ոչ միայն թշնամու ոտնձգություններից հուսալիորեն պաշտպանել Արցախի տարածքը, այլ և հարկ եղած դեպքում ռազմագործողությունները հակառակորդի տարածք տեղափոխել: Հայերին բնորոշ չէ հոխորտալը (ինչը պարբերաբար անում են հարևան Ադրբեջանում), ուղղակի այս մասին բազմիցս արտահայտվել են օտարերկրյա շատ ռազմական փորձագետներ, և մենք ընդամենը արձանագրում ենք առկան:

Ադրբեջանական բանակի զինանոցում գտնվող «սարսափելի» գեներալ մասին առասպելը ցրելու բազմաթիվ փաստարկներ կան հենց համացանցում: Ներկա դեպքում, սակայն, ուզում ենք բավարարվել «Asekose.am» կայքից այդ առնչությամբ քաղված մի գրառում-հոդվածով, որի հեղինակը Հրաչյա Պետրոսյանն է: Կարծում ենք, հեղինակի կողմից բերված փաստերը լիովին բավարար են ոմանց ունեցած անհիմն մտահոգությունները ցրելու համար:

ԲԱ-40-ը, կամ որ ավելի հայտնի է լայն հասարակությանը «Սմերչ» անվանումով, հանդիսանում է համազարկային կրակի ռեակտիվ հրետանային կայանք, որը նախատեսված է բաց տեղանքում կենդանի ուժի և թեթև զրահապատ տեխնիկայի խոցման համար: Ահա այստեղ է, որ մենք հիմնականում շեղվում ենք բուն թեմայից և մեծ մասամբ ռուսական զորավարժարաններում նկարահանված գովազդային տեսահոլովակները հիմք ընդունելով՝ «Սմերչը» համարում ենք սատոմային ռումբից հետո ամենասարսափելի գեներալ (ըստ որոշ լրատվամիջոցների բնութագրման): Նույնիսկ որոշ կարծիքներում «Սմերչը» սկսեցին անվանել զանգվածային ոչնչացման գեներալ՝ ՋՈՋ, սակայն իրականում «Սմերչը» ոչ մի կապ չունի ՋՈՋ-ի հետ: Իզուր չէ, որ ամենապարզաբան են բերեցի ԲԱ-40-ի նշանակությունը: Այնուհետև մի միտք չի կարող բերել նրան, որ «Սմերչը» ՋՈՋ է հանդիսանում: Չանգվածային ոչնչացման գեներալը դասակարգվում են ռադիացիոն, քիմիական, կենսաբանական և որոշ դեպքերում՝ հրկիզող գեներալի, իսկ «Սմերչը» դրանցից որևէ մեկի մեջ չի մտնում:

Մի փոքր ավելի մանրամասնելով ասեն, որ նախ և առաջ, նրա կրակի առավելագույն հեռավորությունը 70 կմ է, այլ ոչ թե 90 կմ: 90 կմ հեռահարությամբ ստեղծվել են որոշ փորձնական հրթիռներ, սակայն դրանց սերիական արտադրությունը չկա: Հաջորդ կարևոր հանգամանքը նրանում է, որ արտահայտվում է միտք, թե մեկ հրթիռը ծածկում է մոտ 60-70 հեկտար տարածք, որը նույնպես թյուրիմացություն է: «Սմերչի» մեկ կայանքի արձակած հրթիռները ցրվում են 60-70 հեկտար տարածքով, մեկ հրթիռն իրականում ծածկում է ընդամենը 1 հեկտար տարածք (տեսակաճորեն միայն), այսինքն՝ եթե 8 հրթիռի մասին խոսենք, ապա պարզ երևում է, որ մեկ համազարկով 60-70 հեկտար տարածքում ծածկվում է մոտ 8 հեկտար տարածք: Այս փաստը միանգամից ի հայտ է բերում ևս մեկ ելակն թերություն: Եթե մենք վերցնում ենք ցրման կենտրոնը և նայում, թե ինչպիսի ցրում են տալիս, ապա տեսնում ենք, որ հրթիռներն ընկնելու են իրարից հազարավոր մետրեր հեռու, այսինքն՝ ԲԱ-40-ը չունի այնպիսի ճշգրտություն, ինչպիսին գովազդում են ռուսները: Այ, ուրիշ բան, եթե դրանց ցրման խտությունը լիներ, ասենք, զոնե 25 հեկտարի վրա, ապա կարելի էր արդեն խոսել «Սմերչի» մեծ վտանգավորություն ներկայացնելու մասին, սակայն այս դեպքում այն իրենից մեծ վտանգ չի ներկայացնում, քանի որ պաշտպանողական մարտակարգը բավականին ապակենտրոնացված է, իսկ բնակավայրում էլ, եթե մարդիկ գտնվում են թաքստոցներում, ապա հուսալիորեն պաշտպանված կլինեն հակառակորդի հրետակոծությունից:

Հիմա փորձեն մեկ այլ տեսանկյունից նախ և հայտ բերել ԲԱ-40-ի թերությունները: 70 կմ հեռահարությունը, որը տալիս է դրա մարտատեխնիկական բնութագիրը, զորավարժարանի հեռահարությունն է, իսկ մենք պարտավոր ենք հաշվել դրա մարտադաշտի հեռահարությունը: Պետք է հստակ հասկանանք, որ մարտադաշտում դրանց համազարկերի տեղերը պիտի առաջնային գծից լինեն այնպիսի հեռավորության վրա, որ հակառակորդի դաշտային հրետանին չկարողանա այդ հեռավորության վրա խոցել: Եթե տարրական վերլուծության եմքարկենք հայկական կողմի ունեցած դաշտային և ռեակտիվ հրետանու հնարավորությունները, ապա կարող ենք ասել, որ հակառակորդն իր ԲԱ-40-ները ճակատի գծից առնվազն 30-40 կմ հետ պիտի տեղադրի, ինչով նրա հեռահարությունը կկազմի 40-30 կիլոմետր: Արանով մենք արդեն իսկ վերացնում ենք այն վտանգը, որ հակառակորդը կարող է իր «Սմերչ»-երով հրետակոծության եմքարկել Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտը:

Հաջորդ հարցը նույնպես վերաբերում է դրանց օպերատիվ կիրառմանը: Ադրբեջանն իր ունեցած «Սմերչ» համակարգերը թողել է կենտրոնական հրամանատարության ենթակայության տակ, ու դրանց ցանկացած շարժ ցանկացած ուղղության վրա, միանգամից ի հայտ է բերվելու, և մենք պատրաստ ենք լինելու դրանց գործողություններին: Իսկ մենք ունենք համապատասխան հեռահարությամբ հրթիռահրետանային միջոցներ, որոնցով կարող ենք ճնշել ու ոչնչացնել հակառակորդի «Սմերչ» կայանքները: Ընդ որում, մեր հետախուզական միջոցները հնարավորություն են տալիս ճշգրտորեն պարզել դրանց տեղերը և կետային հարվածներ հասցնել:

Այս փոքրիկ վերլուծությամբ ցանկանում են ցույց տալ, որ ինչպես ցանկացած ռազմական տեխնիկա, ԲԱ-40 («Смерч») կայանքները հանդիսանում են մահաբեր միջոցներ ինչպես զինված ուժերի, այնպես էլ քաղաքացիական բնակչության համար, սակայն դրանք են կարող համարվել ատոմային ռումբից հետո ամենահզոր գեներալ կամ ՋՈՋ միջոց, որից մենք պիտի սարսափահար լինենք:

## ԴԻՊԼՈՄՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ՝ ՊԵՏԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ



Ինչպես տեղեկացնում է Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչությունը, Նախագահ Բակո Սահակյանը հուլիսի 3-ին հանդիսավոր պայմաններում դիպլոմներ է հանձնել Արցախի պետական համալսարանը գերազանցությամբ ավարտած մի խումբ շրջանավարտների:

Իր խոսքում երկրի ղեկավարը գոհունակությամբ նշել է, որ Արցախի պետական համալսարանը գերազանցությամբ ավարտած շրջանավարտներին հանրապետության Նախագահի նստավայրում դիպլոմներ հանձնելու արարողությունը դարձել է բարի ավանդույթ՝ ընդգծելով, որ պետությունը ձգտում է ունենալ զարգացած ու ժամանակակից պահանջներին համապատասխանող կրթական համակարգ, եւ դա մեր առջեւ ծառայած առաջնային խնդիրներից մեկն է:

Արարողությանը մասնակցում էին Ազգային ժողովի խոսնակ Աշոտ Դուլյանը, վարչապետ Արա Հարությունյանը, պաշտոնատար այլ անձինք:

Էստե

## ԱՎԵՐԱԿՆԵՐՍ՝ ՄԱՀԱՐՁԱՆՆԵՐ ԽՈՍՈՂ, ՍԻՐՏՍ՝ ՎԻՐԱՎՈՐ ԹՈՂՈՒՆ ՆՐԱՆՑ ՄԵՋ ՃԱՄՐՈՂ...

Անձնական ու անանձնական ցավերով խմորված ու խռոված հող իմ հայրենիք:

Տխուր էր քո գիրկը նորից գալու առիթն իմ, ցավն անձնական ու անանձնական: Ավելո՞ծ ապրումներիս ժամանակային հանգրվանը վերջերս էր, ապրիլին: Հուրարկավորության էի գնացել, գնալու էի ավերակներից վերջին ճիգն անելու ու բարձրանալու պատրաստ կիսամեռ հոգին ավանդող գյուղիս վերջին մարդուն, իր գյուղին սիրահար մարդուն հուրարկավորելու, ով թերևս քառասունից ավելի տարեկան արյուն էր քաղաքամայր երևանում, անգամ ճաշակել արտերկրի արտաբերված զորք, սակայն արյուն ու հողի կանչով, թերևս վատառողջ վիճակին, եկել: Եկել-ծվարել էր ելուզակի թաթով քարուքանդ եղած հայրական օջախին՝ հույսով, որ վաղը ինքն էլ, ապրելու և շնչելու արժանի գյուղն էլ կապրեն, ծուխն օջախի երկինք կլորվի և ավերակների դեմ-հանդիման փառավոր հարգանքով հավիտենական նիջով մնջող իր ու իմ նախնիներին կվկայի, որ օջախն ապրում է: Որ քանքարավոր իրենց ձեռքի ու նոցի արարումը դեռ ապրում է, ու ուզում էր, ջանում էր ապացուցել, որ ապրելու են, սակայն...

Սակայն... բառ, միտք, որ ազգային ճակատագրի ուղին շատ հաճախ ու շերտերնդմեջ հատել է իրենով, որ ավելի շատ հնչել է հնչում է հայերենի մեջ, հայոց ճակատագրի էջերում...

Գարնամային բույրով լցված մի գողտրիկ ծորակ՝ շիրիմներից կենդանի մնալու հրաման ստացած, ավերակված, բայց ավերակների մեջ անգամ գեղեցիկ, կանաչ ծառուփի միջից կանչող հեռավոր ու մոտ, տաք մի ձայնով գողտրիկ ու հարուստ գյուղն իմ հայրենի՝ Ջրաբերող (Մյուլբուդարա)՝ Դիզափայտի ցածրադիր ստորոտին փռված

հազար ու հարյուր տարիների պատմություն հեղինակող, որ նախնյաց արարումով իր անվան իմաստի մեջ արդարացված, թերևս օտարախունջ Մյուլբուդարա (հայերենատեր, Նարոտության ձոր) անունն էր կրում, ափսոս ու ահավասիկ, երկրի պատմության տարեգրության մասնիկն այս փոքրիկ էջի նկարագիրն էլ արձանագրեց «սակայն» բառը, և մի՞թե վերջապետվելու է իմ բոլոր օրերի երազների, իմ օջախի, իմ մանկական սրբավայրի վերջին էջը... Այդքան գեղեցիկ ու փթթած չէի տեսել իմ Ջրաբերող գյուղի համը ու ազգիների գարունը: Կարծում էի, երևի ամեն ինչ վայրիացել ու վայրենացել է, արահետ ու կածան, թուփ ու ծառ՝ իրար խառնվել, բայց չէ, նույնն էր բնությունը, ծառերն էլ էին նույնը, մեկիկ-մեկիկ չորացող ու կորուսվող իրենց աճող թվային հաշվարկով, ճանփաներն էլ, այգիները՝ ծաղկած ու կանաչ հազած, ավաղ, տխուր-տխուր, անտեր ու աղերսող...

Սա ցավն էր հայի, բոլոր դարերի, բոլոր հայերի ցավն էր պարուրել իմ հոգին: Տճերի ավերակները, կամարակապ մնացած պատերն ու անձրևից ու թացից թափվող վերջին քարերն էին անձայն լացում, վախենում են մտածելու ու արտաբերել. իսկ զուցե նրանց լացի մեջ հիշողության վերջին բեկորներն են փշրվում և փոշիանում, վերջին բեկորներն այն մարդկանց, ովքեր սիրտ ու հոգի են դրել հզոր երկրի կառուցման, իրենց գյուղի շենացման քարուքանդում, ակոսին, այգուն...

Ավերակներս՝ խոսող ու հրամայող մահաբաններ, իմ գյուղի տաղանդավոր, աշխատասեր, քարից հաց քանած, հայի պատմություն կերտած մեծ գերդաստանների մահաբանները: Երեխայի մտածողությամբ տարիներիս չէի գիտակցում իմ Ջրաբերողի, իմ

ապուլապալերի ստեղծած արժեքների անչափելի գինն ու չափը: Ստեղծել, կապել, կռել ու շինել էին Դիզափայտին՝ Կատարո վանքին թիկն արած Դիզափայտով, Օխտը խաչով օրհնված իրենց օրն էին սկսել կալ արել, արտ ու դաշտ վարել...

Եվ Հայոց Մեծ Աշխարհի գավառներին ու շենքերին՝ Կասպուրականին, Խոյնի ու Սալմաստին, Տարոնին ու Սասունին, Նուխին ու Կարնո Աշխարհին բաժին հասած կործանարար աղետն ու ցավը 21-րդ դարի շենին, 1991թ. մայիսին փոթորիկ նման հեղվեց գյուղիս փթթած այգիների ու ծաղիկների մեջ, արյուն հեղվեց, արյան այնպիսի գետ, որ Դիզափայտիս Ջրությունն էլ չօգնեց:


Օ՛, մերիք ինձ, Կատարո վանք, դու՛ իմ Դիզափայտ, չես վարանում դար ու դարեր ճանապարհած քո գործության առջև, և դուք ներք ինձ, պապերիս ու իմ հոգին կռած անառիկ լեռներ, անմշակ մնացած իմ երեւ և Ներքե բաղեր, դուք մեղավոր չեք և դուք էիք միշտ անառիկ ու հզոր, և մարդիկ՝ ձեր մեջ ծոցվորած, հեղեղն էր ահավոր ու դավադիր...

Այս ի՞նչ փոքր ու տկարն են ես, այցիս օրվա իմ գործությունն այն էր միայն, որ պապիս շիրմին հորդառատ արցունքներս թափելով, արթնացրի ու ոգեկոչեցի անանձնական, մաքուր ու հզոր հիշողություն մեծ երկրի փոքրիկ ու գողտրիկ մի անկյան մասին և հույսերով ցրեցի բարձունքն այն հավերժական ու գեղեցիկ ու ետ եկա նոր իմաստնությամբ լցված հոգով: Այսպես, հենց նույն ձեռագրով է կորուսվել Երզրը, Երզրը մեր, հենց այսպես, ավելի մեծ շառավղով շրջան առած, «Կոլցո» օպերացիայի ենթարկվել մայր Արաքսի այն ափին, տխուր ու անտեր մնացած Երզրը մեր:



ՎԱՍՆ ԿԱՅՐԵՆՅԱՑ

ՆԱ ՄԻՇՏ ԱՌԱՋԻՆ ԷՐ ՄԱՐՏԻ ԴԱՅՏ ՄՏՆՈՒՄ...



Անդրանիկ, հոգու պարտք ունենալու և քեզ նման բյուրավորների համարում, բանգի ծեր կյանքն էր փրկագինը այսօրվա Ազատ ու Անկախ Արցախի: Եվ թեպետ դժվար է գրել մեկի մասին, ում անձնապես չես ճանաչել, բայց ես փորձում եմ... Քեզ որոնում եմ հարազատներիդ ու բարեկամներիդ հուշերում, մարտական ընկերներիդ գրույցներում, մամուլի հրապարակումներում և այն սակավաթիվ նկարներում, որոնք մասունքի պես պահում է կինդ՝ Սեդան (չեզուս չի դառնում այրի ասելու, որովհետև մինչև այսօր էլ ապրում է քեզանով՝ 20 երկար ու ծիգ տարիների քո բացակայությունն ասես չի եղել...): Նկարից նայում ես վճիտ ու լուսավոր հայացքով, սեղմված շրթուքներով կամք ու վճռակամությամբ եմ արտահայտում, իսկ բարձր ճակատից՝ խելք ու հայարտություն: Արդեն քանի՜-քանի անգամ արածս ձայնագրություններն եմ լսել ու քո մասին պատմող ժլատ տողերը վերընթերցել, բայց դարձյալ վախով եմ նայում ճերմակ թղթին: չլինի՝ հերոսական կերպարի հյուսելիս գայթեմ ու... ես հասկանում եմ, որ մարդուս արածս կյանքը, թեկուզև կարճատև, անհնար է պարփակել մի քանի էջերում կամ գրքերում, բայց շատ եմ ուզում, որ ճանաչածս հանգույն այն դառնա նաև ժամանակակցիս սեփականությունը:

Անդրանիկ Աստատուրի Գասպարյան. ԼՂՀ Պաշտպանության բանակի կապիտան, հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով: Այս տարի Արցախյան շարժման 25-ամյա հոբելյանին նա միացրեց իր հոբելյանները՝ ծննդյան 55 և զոհվելու 20-ամյակները: Ահա այս երկու թվերի միջև ասարած կարճ կյանքը կարելի էր սովորական համարել, եթե չներառեր 1988-1993 թվականների մեծ պայքարի ժամանակաշրջանը:

Ծնվել է 1958 թվականի մարտի 15-ին, ԼՂՀ Մարտունու շրջանի Զարդանաշեն գյուղում: Մայրը սիրում էր նրան «քաջ Անդրանիկ» կոչել՝ ի պատիվ Զորավարի, ում անունով կնքելով հինգերորդ գավակին, ասես ազգին նվիրվելու կողմ էր դրել նրա մեջ: Զոհում էր Օվսաննա մայրիկի սիրտը, որ արցախյան բանակում ծառայած իր վեց որդիներից հենց Անդրանիկն է պանծացնելու գերդաստանի պատիվը՝ իր անվանը հարիր կերպով առաջնության դափնին: Գյուղական կենցաղն ու բազմանդամ ընտանիքի հոգսերը շատ ժամանակ չէին թողնում դասերի համար, բայց նա տարված էր մեր պատմավեպերով, որտեղ փնտրում էր իրեն հուզող բազմաթիվ հարցերի պատասխանները: Ութերորդ դասարանն ավարտելուց հետո նա որոշեց

արհեստ սովորել և մեկնեց Քաջարան: Այստեղ և՛ միջնակարգ կրթություն ստացավ, և՛ ավտովարորդ-մեխանիկի մասնագիտություն: Չետո խորհրդային բանակի շարքերում պարտադիր զինվորական ծառայություն անցավ, որտեղ շատ արագ տիրապետեց գեներալի ու ռազմական տեխնիկային: Բանակում ուշիմ և իր կարգապահությամբ աչքի ընկած զինծառայողն արժանացավ հրամանատարության ուշադրությանը, և շուտով Անդրանիկի ծնողները նախկին ստացան, որում շնորհակալություն էր հայտնվում նման զավակ դաստիարակելու համար: Բանակից հետո վերադարձավ հայրենի գյուղ, աշխատանքի անցավ, ամուսնացավ հարևանի աղջկա՝ 19-ամյա Սեդայի հետ, իսկ մեկ տարի անց տեղափոխվեց Ստեփանակերտ:

Երբ Արցախյան շարժումն սկսվեց, նա գլխավորեց մեծաքանակ մեջ: Միտինգներին թեպետ մասնակցում էր, բայց ներքուստ զգում էր, որ պայքարի ու բողոքի այդ խաղող ձևը հարևաններին հասու չէ: Եվ շատ շուտով քաղաքակիրթ այդ պայքարին նրանք Սուևգայիթով պատասխանեցին: Մի անգամ աշխատանքից տուն էր դառնում, երբ տեսավ, թե ինչպես է խորհրդային բանակի զինվորը ռետինե մահակով ծեծում մի ծեր կնոջ՝ արգելելով նրան անցնել հրապարակով: Արյունը խփեց Անդրանիկի գլխին, մոտեցավ, խլեց մահակը և սկսեց ծեծել զինվորին, երբ վրա հասած զինվորները ձեռքազրկեցին նրան: 1990-ի ապրիլն էր, սաֆոնովյան ժամտ շրջանը, երբ ամենափոքր զանցանքը խստորեն պատժվում էր ժողովրդի կամքը ճնշելու և ոգին կտրելու միտումով: Մեծ եղեռնի 75-րդ տարելիցի առթիվ Ստեփանակերտի հուշահամալիրում հանրահավաք կազմակերպելու համար ձեռքազրկվել էին մի խումբ մտավորականներ: Մի մասին բաց էին թողել, իսկ Դանիել Գրիգորյանին և Արկադի Թովմասյանին 11 այլ ձեռքազրկվածների հետ ուղարկել էին Պյատիգորսկի «Այի-տակ կարապ» բանտը: Նրանց մեջ էր և Անդրանիկ Գասպարյանը: Բանաստեղծ, ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Արկադի Թովմասյանի հետ մեր գրույցում, երբ գրուցակիցս վերհիշում էր այն օրերը, ակամայից հիշեցի անցած դարի 30-ականներին ստալինյան բռնությունները ցմրուր ճաշակած Գուրգեն Մահարու հայտնի տողը. «Կեցցե հում-հում-հումանիզմը»:

«Անդրանիկի հետ ծանոթացել եմ բանտում: Ինձ ու Դանիելի (Գրիգորյան) համար ոնց որ պահապան լինեք: Ամբողջ երթամբ զինվորական էր, բայց անչափ նուրբ ու զգայուն հոգի ուներ: Նա միշտ մնաց լավատես և չէր կասկածում մեր հաղթանակին: Ես նրա մեջ տեսնում էի իսկական զինվորին. քանի որ միշտ էլ տարբերել եմ՝ նա մա՞րդ է սպանում, թե՞ թշնամի: Նա միշտ էլ թշնամի է սպանել, նա մարդասպան չէր»,- այսպիսին է մնացել Անդրանիկը Ա. Թովմասյանի հուշերում:

Մեկ անիս բանտում պահելուց հետո նրանց ազատ արձակեցին: Երբ Անդրանիկը վերադարձավ տուն, անճանաչելիորեն փոխվել էր. Սեդայի պատմելով՝ հարթանդամ ու ամրակազմ ամուսնու կեսն էր մնա-

ցել: Նա արդեն համոզված էր, որ ինչպես ժողովուրդն է ասում, այդ խնորը շատ ջուր էր տանելու, և զինված պայքարն անխուսափելի էր: Շարժման ֆիդայական փուլում ընկերների հետ թաքուն գեներ էր տեղափոխում Դարդութ, սահմանամերձ բնակավայրեր, մասնակցում պաշտպանական մարտերին: Տանը ոչինչ չէր պատմում, իսկ կնոջ հարցուփորձին միշտ վերջակետ էր դնում իրեն յուրահատուկ կատակներով: Սեդայի ասելով՝ ռուսներ կային, ովքեր հայերի կողմից միացել էին Շարժմանը: Նրանք զգուշացնում էին, որ այստեղ մնալը հեռանկար չունի, և որ վատթար օրեր են սպասում արցախցիներին, խորհուրդ էին տալիս դուրս գալ և փրկվել: Սեդան փորձեց ամուսնուն համոզել հեռանալ երկրից. այն օրերին, երբ դեռ նոր էին ամուսնացել, Անդրանիկն ինքն էր առաջարկել կնոջը տեղափոխվել Ռուսաստան, այն ժամանակ կինը չէր համաձայնել, իսկ այժմ՝ ամուսինը: Նա հակադարձեց կնոջը՝ ասելով. «Որ ես գնամ, մյուսը զմա, մեր երկիրն ո՞վ պիտի պահի»: Ոչ ոքի չլսեց. հայրենիքը բարձր էր ամեն ինչից: Մի օր էլ եկավ տուն, թե. «Շորերս պատրաստիր, առաջին անհրաժեշտության պարագաներ դիր, տղերքի հետ գնում ենք դիրքեր պահեմք, ձայն չհանես»: Երբ ինքնապաշտպանական խմբերն ընդգրկվում էին բանակային ստորաբաժանումների մեջ, Անդրանիկը, որպես շարքային զինվոր, մտավ 5-րդ վաշտ, իսկ շատ չանցած՝ նշանակվեց 7-րդ վաշտի հրամանատար: Շուտով նրան շնորհվեց կապիտանի կոչում:

Նրա մարտական ուղին ձգվեց Կրկժան, Մալիբեյլու, Խոջալու, Քյուսալար, Զանհասան, Զամիլլու, Մարտակերտի շրջանի ազատագրական կռիվների միջով: Առաջին անգամ վիրավորվեց Զանհասանում, երկու անգամ էլ՝ Մարտակերտի շրջանի գյուղերի ազատագրման ժամանակ: Երբ ձեռքից վիրավորվել էր, եկել էր տուն, հոսպիտալում չէր պառկել, մի տեսակ քաշվել, անհարմար էր զգացել ծանր վիրավորների կողքին պառկելուց: Ամեն անգամ էլ չէր համբերում մինչև լրիվ ապաքինվել, նորից մարտի էր մեկնում: Մարտական ընկերները հիացմունքով են խոսում նրա մասին, պատմում նրա քաջության ու մարտավարական հմտությունների մասին: Նա միշտ առաջինն էր մարտի դաշտ մտնում՝ հաստատելով հայ հրամանատարի նժեռեյան կերպարը. «Չայ զինվորը սովոր չէ, որ հրամանատարը ղեկավարի իրեն խրամադից. հրամանատարը պիտի զինվորի առջևից քայլի»: Մահվան դեմ հանդիման քանիցս կանգնած զինվորականը երբեք թույլ չտվեց, որ վախը գլուխ բարձրացնի իր ներսում, կամ թեկուզ մեկնումն էլը կասկածի իր անվեհերությանը: Սեդան հիշում է մի դեպք ամուսնու մարտական ընկերոջ՝ Ալիկ Գասպարյանի (ով, ի դեպ, Անդրանիկի զոհվելուց հետո ստանձնեց 7-րդ վաշտի հրամանատարությունը) պատմածից: Մի անգամ շրջափակման մեջ էին ընկել, տղաների մի մասին հաջողվել է ճեղքել օդակը և առաջ շարժվել, իսկ Անդրանիկն ու Ալիկը մնացել էին՝ կտրվելով ընկերներից: Թիկունք թիկունքի նստել էին մի փոքրիկ ծառի տակ՝ գիտակցելով, որ

մահն անխուսափելի է: Մեկ էլ հանկարծ Անդրանիկը գրպանից երկու կոնֆետ հանեց՝ ասելով. «Արի վերջին անգամ մի քաղցր բան ուտենք...»: Այդպես սառնարտորեն նա ամեն վայրկյան պատրաստ էր ելնելու մահվան դեմ և հաղթելու՝ մահից էլ հզոր իր կենսասիրությամբ: Բարեբախտաբար, շատ չանցած, հաջողվում է ռացիայով կապվել տղերքի հետ, նրանք գրոհում են թշնամու դիրքերի վրա, վերջինս թողնում-փախչում է, իրենք էլ միանում են ընկերներին:

Չինակից ընկերներից Գրիգորի Բաղդասարյանի համար Անդրանիկն իսկական հերոս էր, հրամանատարի օրինակելի կերպար, վստահելի ընկեր, ում հետ անվարան կարելի էր մարտի նետվել: Մի անբացատրելի ներքնատեսությամբ էր օժտված հրամանատարը՝ իսկական հոգեբան էր: Մարտի նախօրեին նա շրջում էր զինվորների մեջ, գրուցում-խոսում նրանց հետ, այսպես ասած, շոշափում նրանց տրամադրությունը, զգում նրանց հոգեվիճակը: Մարտից առաջ այդ «ներքին հետախուզությունն» ավարտվում էր նրանով, որ մի քանիսին ասում էր՝ մնացեք, վաղը դուք չեք մասնակցի կռիվին: Անչափ ուշադիր էր զինվորների հանդեպ: Տղաներից մեկի՝ Սեփակի ծննդյան օրն էր. հակառակի պես սեղանին դնելու մի կարգին բան չունեին: Ինչպես ասում են՝ մարդու մտքին տեղ լինի. Անդրանիկին ու Գրիգորիին (Գիրո) հաջողվում է մի քանի տուփ պահածո և կարտոֆիլ ձեռք գցել, ու քեֆի սեղանն արդեն պատրաստ էր: Տնից-տեղից հեռու զինվորն ուրախանում է՝ զգալով իր կարևորությունը, վայելելով ընկերների սերն ու հարգանքը: Չաջորդ օրը... Սեփակը գարկվեց. դա նրա վերջին ծննդյան օրն էր...

Վերհիշում է Անդրանիկի մարտական ընկերը՝ ավագ լեյտենանտ, 3-րդ գումարտակի 8-րդ վաշտի հրամանատար Գրիգորի Բաղդասարյանը. «Անդրանիկը խիզախ անձնավորություն է եղել, պատրաստ էր ամեն վայրկյան կռվելու և մեռնելու հայրենիքի համար: Մարտի գնալուց առաջ նա շարք էր կանգնեցնում վաշտը և ասում. «Ես գնում եմ մեռնելու, ո՞վ է գալիս ինձ հետ»: Ես դա Անդրանիկից եմ սովորել, ես էլ նույնն էի ասում իմ զինվորներին: Ուրիշ էր նա. ոչ վախ ուներ, ոչ երկյուղ: Չկա նրան ճանաչող մի մարդ, որ նրա մասին մի վատ խոսք կարողանա ասել, նա անվերապահ հեղինակություն էր բոլորիս համար»: Երբ գրուցում էի նրա հետ, հասկացա՝ ովքեր անցել են պատերազմի թոփուքով, նրանց համար պատերազմը երբեք չի վերջանում, այն շարունակվում է նրանց հոգում, ապրում նրանց հուշերում:

Սեդայի պատմածներով իմ մտապատկերում փորձում եմ ամբողջացնել ամուսին և հայր Անդրանիկի կերպարը: Իր ընտանիքին նվիրված ու հոգատար հայր էր նա: Միրում էր տանը միշտ ծաղիկներ տեսնել և առիթով կամ անառիթ դրանցով ուրախացնում էր տնեցիներին. «Ամեն մարտի 8-ի առավոտյան, երբ աչքներս բացում էինք, ծաղիկներն արդեն ծաղկամանում էին, իսկ նվերները՝ իմ և աղջիկների բարձրի տակ»: Անգամ պատերազմի ժամանակ տուն գալիս հաճախ

էր դաշտային ծաղիկներ բերում իր հետ: Ընտանեկան մարդու տեսակն էր, ով ամենից լավ իրեն զգում էր իր տանը, կնոջ ու աղջիկների կողքին: Երբ ոտքը տան շենից ներս էր դնում, տունը լցնում էր իրենով՝ այնքան աշխույժ ու կատակասեր բնավորություն ուներ: Առաջնեկի՝ Գայլայի ծնունդից հետո Սեդան երազում էր տղա զավակ ունենալ, բայց ծնվեց Գայանեն. «Երկրորդ աղջիկս որ ծնվեց, ինձ աչքալուսանք էին տալիս, իսկ ես լաց էի լինում, որովհետև տղա էի ուզում: Այդ ժամանակ Անդրանիկն էլ հիվանդանոցում էր. վիրահատություն էր տարել: Չենց հիվանդանոցից էլ եկել էր տեսության: Տեսնելով ինձ անտրամադիր՝ հարցրեց. «Չո բան չի՞ պատահել երեխային», իսկ երբ պատահեց իմացավ, հուսադրեց, թե դեռ կհասցնեմք տղա ունենալ և շատ լավ է, որ մեր աղջիկը թույր ունի, թե չէ ոչ ես, ոչ դու թույր չունենք: Պատերազմը չթողեց. չհասցրինք... այս երազանքն էլ թերի մնաց»,- անկեղծանում է Սեդան: Մոր կիսատ երազը Գայանենն լրացրեց. նրա որդին իր խիզախ պապի՝ Անդրանիկի անունն է կրում...

Մարտակերտի շրջանի Մաղավուզ գյուղի մոտ 1993-ի մարտի 13-ի մարտը վերջինը եղավ Անդրանիկ Գասպարյանի համար: Վերջին անգամ մարտի մեկնելուց առաջ, երբ պատրաստվում էր դուրս գալ տնից, կնոջ հարցին՝ «Քո ծննդին տա՞նք չես լինելու», նա մի տեսակ ցրված պատասխանեց՝ երևի չէ, Սեդա: Ապա անձնագիրն ու մյուս փաստաթղթերը հանձնեց նրան: Երեխաները քնած էին, երկուսին էլ համբուրեց, դուրս եկավ: Ինչպես միշտ՝ աստիճանահարկակին կանգնած կինը հայացքով ճանապարհ էր դնում ամուսնուն: Երբեք նա այդպես լուռնումնջ չէր հեռացել տնից, միշտ էլ կատակով, մի հուսադրող խոսքով էր բաժանվում, բայց այդ անգամ կարծես սիրտը կանխազգում էր... Երբ հասավ 3-րդ հարկ, գլուխը բարձրացրեց, մի անգամ էլ թախծախառն հայացքն ուղղեց կնոջը և, առանց մի բառ ասելու, իջավ աստիճաններով: Մահվան ուրվականն էր սավառնում նրա շուրջը... Նա, ով այնքան լավ զգում էր իր զինվորներին, գուշակում նրանց հոգեվիճակը մարտից առաջ, անշուշտ, զգացել էր և իր մտապետ վախճանը, բայց հետ չդարձավ, որովհետև հազար անգամ նայել էր մահվան աչքերին, և միշտ մահից էր մահանջել նրա անվան ու անպարտելի ոգու առջև...

Ընկերների հետ հետախուզության էր գնացել: Մաղավուզ գյուղի գերեզմանատանը շրջափակման մեջ ընկան: Չորս ժամ տղաները դիմադրեցին բազմապատիկ գերազանցող թշնամուն: Արդեն վիրավոր՝ նա դեռ շարունակում էր կռվել: Երկրորդ գնդակը խոցեց սիրտը...

Երկու օրից՝ մարտի 15-ին նա կղաճար 35 տարեկան, մինչդեռ այդ օրը ծննդավայրում հայրենի հողին հանձնեցին իր ամուսնը փառքով պսակած քաջորդուն: Մեծ Դայրենականում գոհված զարդանաչեցիների հիշատակին կառուցված հուշարձանի մոտ ստեղծվեց մի նոր սրբավայր, որտեղ գյուղի ամփոփեց վասն հայրենյազ մահատակված իր նորոյա հերոսներին:





ՎԵՐՆՈՒՅ

ԸՆԿԵՐՈՋՍ ԱՆՄԱՅ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Տարիներ առաջ ավարտած շատ շրջանավարտներ Ամռանը հանդիպում են, նշում ավարտելու հերթական տարեդարձը: Սույն ակնարկը նույնպես ուսանողական տարիների վերհուշ է՝ ժամանակաշրջանի արտացոլումով:

Ես մի ընկեր ունեի, Լիպո անունով: Ե. Չարենց

Գրախանութում եմ: Նայում եմ ու մտածում, թե ինչ գիրք առնեմ: Ինձ է մտնում մի երիտասարդ և հարցնում.

- Ներեցեք, եթե չեմ սխալվում, Մելքունյան Սերգեյի եղբայրն եք:

- Այո, այդպես է եղբորս ազգանունը, ինչ է որ...

- Նա իմ ընկերն է, սովորել ենք մի դասարանում, - ասում ու ձեռքը մեկնում է ինձ՝ ծանոթանալու համար, - Այո՞ ալեքսանյան:

Այս ձևով ծանոթացա եղբորս ընկերոջ՝ Այոյի հետ: Եղբայրս երևանի պետական արհեստագործական դպրոցում էր: Այդ առաջին ծանոթությունից հետո քաղաքում քաղցր հանդիպումներ էինք ունենում շուտ-շուտ, և Այոյի պատմում էր իրենց ընկերության մասին: Իմացա, որ սովորել է քաղաքի հ. 1 միջնակարգ ցերեկային դպրոցում: Թողել է ընկերներին և տեղափոխվել երեկոյան դպրոց, որպեսզի ցերեկն աշխատի և օգնի ծնողներին: Ընկերական ամուր կապը պահպանում էր ցերեկային դպրոցի իր համադասարանցիների հետ: Աշխատում է, որոշ չափով թեթևացնում ծնողների հոգը ու ավարտում երեկոյան դպրոցը: Միաժամանակ իր հետ դպրոցն ավարտում են ցերեկայինում սովորող իր ընկերները և իրենց ուսումը շարունակում տարբեր բուհերում և այլուր՝ ով որտեղ կարողանում է: Ընկերներն արդեն հասել էին 5-րդ կուրս, իսկ Այոյն աշխատանք: Այդ նույն տարում Ստեփանակերտից գրադարանային բաժնում ընդունվեցին երեք աղջիկներ, ես էլ ընդունվել էի նույն ինստիտուտի հայոց լեզվի և գրականության ֆակուլտետը: Հինգ ուսանող-ուսանողուհիներ պայմանավորվում էինք՝ ինչու, երբ գնալ պարապմունքների: Մի անգամ էլ որոշեցինք գնալ ուղղաթիռով, որը «Կուկուրուզնիկ» էր կոչվում: Թե ինչու «Կուկուրուզնիկ» էին կոչում, չգիտեմ: Տեղավորվեցինք ուղղաթիռում, շարժվեց, կտրվեց գետնից ու բարձրացավ օդ: Օդում խիստ տատանվում էր: Մեկ թեքվում ու ընկնում էր ձախ կողքի վրա, մեկ՝ աջ, մեկ էլ կարծես ընկնում էր ցած, ու մեր կյանքին՝ վերջ: Այսպես որոշ տարածություն անցնելով՝ օրիորդ Զ-ն ուշազանց եղավ, կորցրեց իրեն: Բռնեցինք, աղջիկները ջուր ցանցից ղեմքին, շփում-տրորում էին ծոծրակը, ճակատը, իսկ Այոյն Զ-ի երկու ձեռքերը բռնել՝ բարձրացնում-իջեցնում էր, որպեսզի շնչառություն տա: Խիստ, ապտակում էինք դեմքին, բայց օրիորդ Զ-ն զգալիորեն ոչ մի նշան ցույց չէր տալիս, փայտացել էր, անկենդան մարմին: Իսկ օգնության ոչ մի հնար չկար: Հո չէ՞նք կարող ուղղաթիռի արագությունը իջեցնել կամ բարձրացնել՝ շուտ տեղ հասնելու: Բոլորս էլ շատ էինք անհանգստանում Զ-ի այդ վիճակի համար: Վերջապես գեցցիք, որ ուղղաթիռը կապվեց գետնին, և մենք խոր շունչ քաշեցինք: Դուռը բացվելուց անմիջապես հանցեցինք մեր ընկերուհուն, մի կողմ տարանք և շտապ օգնություն կանչեցինք: Եկան սրկում կատարեցին, և վերջապես կենդանացման նշաններ նկատեցինք, մնաս-բարով ասացինք մեր «Կուկուրուզնիկին» ու այնպե՛ս չօգտվեցինք նրանից:

Հաջորդ պարապմունքին (նույն հինգը) արդեն գնում ենք ավտոբուսով: Ավտոբուսում ամեն մեկն զբաղեցրել էր իր տեղը: Մի կին ոտքի վրա էր, կանգնած էր մնացել, տոմս չուներ. ավտոբուսը շարժվելու պես Այոյը տեղը գիջեց նրան ու ինքը կանգնեց: Ամբողջ ճանապարհին ուղևորներից պահանջում էր, որ ով ինչ շնորհք ունի, ցույց տա: Մեկը երգում էր, մեկը պատմում իր կյանքից որևէ միջադեպ կամ անկերպ, երգել էր տալիս խմբովին: Դիրիժորի կամ խմբավարի դեր էր կատարում:

Ջարմանում էի, թե այդ երիտասարդի մեջ բարձր կուլտուրայի հետ համատեղ այդքան էներգիան որտեղից է:

Եվ այսպես, կարծես աննկատելի հասնում ենք Նորթի գանգված: Ավտոբուսը կանգնում է Ռայկունի դիմաց: Այոյի տեղը զբաղեցրած տիկինը շնորհակալությամբ է հայտնում, մաղթում երկար կյանք, առողջություն ու իջնում: Հենց որ ավտոբուսը շարժվեց, Այոյն բարձր ծիծաղելով նստեց ազատված իր տեղը ու ասաց. «Նստեմ, թե չէ տեղս ինձնից կնեղանա»:

Հասանք քաղաք. այս անգամ չէինք անհանգստանում, գիշերելու տեղ ունենք: Երևան ճանապարհվելու նախօրեին ինձ ասել էր, որ



իրենց բարեկամ մի տղա եկել է Ստեփանակերտ, սեյակի բանալին տվել, որ երևան գնալուց մնա այնտեղ, այդպես ապահով կլինի սեյակը, իսկ տղան ընկերուհու հետ գնում է Բուլղարիա՝ հանգստանալու:

Երկուսով գնացինք այդ սեյակը: Հարմարություններ լավ էր՝ երկու մահճակալ, սեղան, լավ տեղաշար և այլն: Հանգստացանք ու գիշերեցինք: Երկրորդ օրը երեկոյան նստած ենք սեղանի շուրջը, գրում, կարդում ենք, խոսում: Դուռը շրջվեց, հանկարծ բացվում է: Ներս է մտնում մի տղամարդ, նրա ետևից՝ անմիջապես մի կին: Տղամարդը մի հսկա էր, եթե գլուխը չլիներ, տեսնողը կասեր՝ երկու մետր բարձրության մի կարաս է իր առջև: Իսկ կինը զգեստապահարանի էր նմանվում: Լայնք ու երկարություն իրարից չէին տարբերվում: Ներս մտնելուց անմիջապես հարձակման դիրք ընդունեցին, սկսեցին կարկուտ տեղալ մեր գլխին.

- Ուլթե՛ր եք, ի՞նչ գործ ունեք այստեղ, ո՞վ է իրավունք տվել տեղաշարին ձեռք տալ... Հենց հիմա ազատեցե՛ք սեյակը...- դադար չէին առնում, որ իրենց հարցերին պատասխանեց:

Այոյը հագիվ կարողացավ ասել, թե ինչպես ենք ընկել այստեղ, ով է սեյակի բանալին տվել իրեն և ինչ է ասել: Միևնույն է, ոչ մի բան հաշվի չէին առնում, թեկուզ ուշ երեկո էր, պետք է հենց հիմա ազատեցե՛ք սեյակը: Մեզ մտա նաև ես, խնդրեցի, որ շատ ուշ է, այս գիշեր մնանք և վաղ առավոտյան հեռանանք: Մի կերպ համաձայնության եկանք առավոտյան էլ ժամը ուղիղ 10-ին օպերայի նուտքի մոտ սեյակի բանալին տանք տիկինը: Վերջապես դուրս եկան առանց բարի գիշեր ասելու: Դե ասենք, այստեղ բարի ինչ կա, որ ասեին:

Նրանց հեռանալուց հետո շունչ քաշեցինք: Նստեցինք, և ես ընկա մտքերի մեջ՝ այս տղայի վերաբերմունքը, հենց երեկ՝ ավտոբուսում ինչպիսին էր իր շրջապատի մարդկանց նկատմամբ և ինչպիսին՝ սրանց վերաբերմունքը այս տղայի նկատմամբ:

- Հը, ի՞նչ ես տխրել, ի՞նչ ես մտածում...- լսեցի Այոյի ծայրը:

- Չեմ տխրել, մտածում էի այն տղայի մասին, որը բանալին ձեզ է տվել:

- Ի՞նչ ես մտածում նրա մասին, նա այնտեղ ի՞նչ օրեր է անցկացնում, իսկ մեր գլխին ինչ խաղացին,- ասաց Այոյը, աչքերը փակեց և երկի Բուլղարիայի վառնա առողջարանում անցկացրած իր օրերը հիշեց:

- Մտածում եմ, որ խեղճ տղա, այս զոքան-

չի մոտ ընկնելու է դժոխքի մեջ: Բայց սա՛ մի կողմ, Այոյ, ի՞նչ է աշխատում այդ տիկինը:

- Թատրոնում է աշխատում, ասում են՝ ինչ-որ դերասանուհի է:

- Հա՛, ավր ասում եմ, ուրեմն նա մեզ մոտ իր դերի մեջ էր: Բայց լավ էր խաղում անփոփոխ,- ասացի ես, ու լավ ծիծաղեցինք:

Ուշ էր, պառկեցինք քնելու: Պայմանավորվածի համաձայն, ժամը 10-ին հանձնեցինք բանալին նշված տեղում: Գնացինք համալսարանի պարտեզի մոտ, թիվ 1 հանրակացարանում տեղ վերցնելու: Մինչ այդ եղել էինք մոտ, մեզ ճանաչում էր:

Մեր ուսանողական կյանքի հինգ տարիների ընթացքում արկածային դեպքեր շատ են պատահել: Բայց մեր օրերը միշտ աշխատել ենք անցկացնել կուլտուրական միջավայրում: Այցելել ենք գրողների տունը, հանդիպել գրողների, բանաստեղծների հետ, եղել ենք քաղաքի թանգարաններում, հաճախել օպերա, բալետ, եղել տեսարժան շատ վայրերում:

Իսկ կիրակի օրերին՝ Գառնի, Գեղարք, Զվարթնոց, Էջմիածին և այլուր: Ու որևէ տեղ երբ գնայինք, ուսուցիչ էր Այոյը, իսկ ես՝ աշակերտ: Նրա մոտ ծրագրված էր, թե որ օր ուր գնանք:

- Այսօր պիտի այցելության գնանք քանդակագործ Գևորգ Զորեքչյանին,- ասում է Այոյը:

- Այ Այոյ, Զորեքչյանը ո՞ւր, մենք՝ ուր,- զարմացած ասում եմ ես:

- Զորեքչյանին հանդիպել եմ Սոչիում, սանատորիայում, ծանոթացել ենք, լավ ընկերություն արել, հասցեներ փոխանակել, որ մեր ընկերությունն այդպես էլ շարունակվի: Հիմա պիտի գնան և տեսնեն՝ ինչպես է,- պատասխանում է Այոյը:

- Ախր դու մի տեղ ընկնես և ընկեր չգտնես՝ անհավատալի է,- ասում եմ ես և պատրաստվում գնալ հետը:

Գնացինք, տանն էր: Ջերմությամբ ընդունեց, հյուրասիրեց, զրույցի ժամանակ խոսեց իր հետագա ծրագրերի մասին, որից հետո ծանոթացրեց իր արվեստանոցին: Նմուշներին որը դեռ գիպա էր, որը՝ արդեն քանդակ: Առաջին իսկ հայացքից նկատելի էր տանտիրուհու բացակայությունը, բնակարանը (հյուրասենյակ, մեջասենյակ) և արվեստանոցը խառնված էին իրար: Քանդակագործը դեռ ամուրի էր, չնայած արդեն շատ էլ երիտասարդ չէր: Այոյը ևս տարիք էր առնում, բայց դեռ կյանքի ընկերուհի չէր ընտրել: Բավականություն ստանալով մեր քերթ ընդունելուց՝ հյուրասիրությունից և ճանաչված քանդակագործի հարուստ արվեստանոցը դիտելուց՝ մեր շնորհակալությունն ենք հայտնում, ասում՝ մինչ նոր հանդիպումն ու բաժանվում՝ քանդակագործին թողնելով իր արվեստի գեղեցիկ աշխարհում իրագործելու իր մտահղացումներն ու երազանքները:

Հաջորդ ծրագրվածի համաձայն՝ պիտի լինե՞նք մեր հայրենակից բանաստեղծ Միքայել Հարությունյանի տանը: Գնացինք: Մե՛նակ էր: Դա լավ է, կարողանում ես ազատ, սրտաբաց խոսել: Նա իր հոր՝ Արտեմ քեռու (յուր ժամանակ Ստեփանակերտի ավտոկայանի տնօրեն, իսկ ով չէր ճանաչում Արտեմ քեռուն, անեկոյուններ ինչքան կային նրա մասին) պատճեն էր: Միակ տարբերությունը երիտասարդ լինելն էր, տարիքը: Հետաքրքրվեց, թե ինչ կա, ինչ չկա իր հայրենիքում, այնուհետև կարող էր նոր գրած դեռ անտիպ բանաստեղծությունները:

Եվ մինչ հրաժեշտ կտայինք, Այոյը նստեց դաշնամուրի առջև, բացեց ու նվագեց ինչ-որ եղանակ: Որից հետո նվագեց Միքայելը: Ստեղծերին խփելիս դեմքի շարժումներ էին անում, նայում վերև, փակում աչքերը. երևի ընկնում էին հնչյունների հմայիչ ու կախարդական աշխարհը: Իսկ ես ոչինչ չէի հասկանում: Հիմա էլ ասում եմ՝ ավելի լավ հասկանում եմ ատոմագետների (Բոր, Ռեզերվոր, Յեյթենբերգ, Հատուկներ...) լեզուն, թե ինչ են ուզում ասած լինել, քան Շուբերտ, Լիստ, Գրիգ, Շոստակովիչ: Նուտաներն ինձ համար միշտ էլ եղել և այսօր էլ մնում են անըմբռնելի, անհասկանալի, ինչպես արաբական կամ չինական տառանդիչները: Զե՛ որ ընդհակառակը պիտի լինի, որովհետև թե՛ երաժշտությունը և թե՛ գրականությունը արվեստի մի տեսակ են (շարժական), մեկը՝ գեղարվեստական խոսքի, մյուսը՝ հնչյունների:

- Իմանո՞ւմ ես այսօր երեկոյան ում մոտ պիտի գնանք,- դիմում է ինձ Այոյը:

- Դե ի՞նչ իմանամ, ծրագիր կազմողը դու ես, որ ասես, կիմանամ,- պատասխանում եմ:

- Պիտի գնանք իմ սիրելի պրոֆեսոր Առաքել Առաքելյանի տուն:

Առաքել Առաքելյանը մեր խանութայն գյուղից է, հունագետ ու հռոմեագետ, հեղինակն է «Հին հունական գրականություն» և «Հին հռոմեական գրականություն» գրքերի, Էջմիածնի եկեղեցական խորհրդի յոթ անդամներից մեկը: Այոյն ևս երևանում լինելուց անպայման այցելում էր պրոֆեսորին՝ իմանալու նրա առողջության մասին: Այոյն մտել էր Առաքելյանի սիրտը, հոգին, պրոֆեսորը Այոյային իր հոգեորդին էր համարում: Այոյայի հետ մեկ ուզում էի գնալ և տեսնել այդ մարդուն և մեկ էլ ուզում էի չգնալ, մտածելով՝ իմ խղճուկ գիտելիքներով ինչպես կարող եմ ներկայանալ նրան, մանավանդ որ իմանամ՝ գրականության բաժնի ուսանող եմ: Համարձակություն ունեցա գնալ: Ինչքան ճիշտ վարվեցի, նրա միջոցով ես ծանոթացա հայոց երգի արքա համաճարտ Կոմիտասի ձեռքով Վեհափառին գրած երկու նամակներին (մասունքներին), որ իմ կյանքում երբեք չէի կարող առանց Այոյայի, առանց մեծանուն գիտնական, պրոֆեսոր Առաքել Առաքելյանի:

Օրը կիրակի էր, ուրեմն, մեր այցելությունը երևանի շրջանակից դուրս պիտի լինի... Էջմիածնում ենք, գնում ենք հոգևորականների միատեսակ, մի շարքի վրա իրար կպած սենյակների (խուց) առջևով: Այոյն կանգնում է, նրա հետ՝ նաև ես: Փայտե թախտին պառկած է մեկը, նա, ում մոտ գնում ենք՝ Վարդան Սրբազանը, ծնունդով Մարտակերտի շրջանի Գյուլաթաղ գյուղից: Քնած չէր, բայց նկատելով՝ բարձրանում է, բարևում է, հենց թախտին էլ նստում ենք երեքով ու զրույցում: Այնուհետև մեզ տանում է իր սենյակը: Նայում ենք, խնամքով շարված մեր պատմիչների գրքերն են, կտակարաններ...

Սրբազանը հագնում է սքեմը, ձեռն առնում գավազանը, մեր խնդրանքով մեզ ուղեկցում են դեպի վեհարան:

Վազգեն Առաջինը՝ նոր ընտրված կաթողիկոսը, շրջագայության մեջ էր ԱՄՆ-ի, Լատինական Ամերիկայի համայնքներում: Վարպետները նորոգում էին վեհարանի դահլիճը: Վանքի թանգարանում, հետո՝ ճեմարանում, որտեղ ժամանակին ուսանել են մեր մշակույթի երևելի շատ գործիչներ և գիտնականներ: Գեմարանում ուսումնական մասի վարիչն էր՝ նստած իր աշխատատեղը՝ կարճ միտրոքով, հաճելի տեսքով, երեսուցի մոտ տղամարդ: Նրա առաջարկությամբ նստեցինք, մի կես ժամ զրույցեցինք դեպից-դեմից, հայտնեցինք մեր շնորհակալությունը ընդունելության համար և դուրս եկանք:

Երևան վերադառնալու ճանապարհին եղանք Զվարթնոց տաճարում: Այդպես անցավ մեր այդ կիրակի օրը:

Թե՛ ես և թե՛ Այոյը մեր ուսանողական կյանքին հրաժեշտ տվինք միասին: Ես աշխատում էի Ստեփանակերտի թիվ 6 գիշերօթիկ դպրոցում, իսկ Այոյը՝ կուլտուրայի տանը: Մեր աշխատավայրերն իրարից մոտիկ էին, ցանկացած ժամանակ հանդիպում էինք և խոսում մեր առօրյա կյանքից...

1968թ. ընտանիքով տեղափոխվեցի Ղափանի շրջանի Քաջարան քաղաքը՝ Ստեփանակերտում թողնելով իմ անգին ընկերոջը:

Արդեն մեր հանդիպումը հիմնականում լինում էր այն դեպքում, երբ ես արձակուրդին գալիս էի Ստեփանակերտ: Իհարկե, միշտ գալիս էի, որովհետև ծնողներս այստեղ էին:

Այոյը հասարակական լավ կազմակերպիչ էր, զարգացած մտավորական: Չափազանց սիրում էր պատմական վայրերն ու հնությունները, սիրելի գրողներն էին Պետրարքան և Շեքսպիրը: Հայ բանաստեղծներից Պարոյր Սևակը նրա կուռքն էր: Մի օր ինձ ասաց. «Որոշել եմ անգիր անել «Ամբիկ» գանգակալությունը»:

Գուցե նա կանխագույն էր, որ այս աշխարհը պիտի շուտ թողնի և աշխատում էր շատ անել, շատ թողնել:

Ես էլ մի ընկեր ունեի, անունը՝ Այոյ...

Գ. ՄԵԼՈՒՄՅԱՆ  
Թոշակառու ուսուցիչ

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ

ԸՆՏԱՆԻՔԻ ԴԵՐԸ ԵՐԵՒԱՅԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Մարդու բնավորության ու աշխարհայացքի ձևավորման, նրա հոգևոր աշխարհի հարստացման ու դաստիարակության գործում չափազանց մեծ է դպրոցի և ընտանիքի դերը:

Ընտանիքն այն միջավայրն է, որտեղ ծնվում, մեծանում և հասակ է առնում երեխան: Ֆրանսիացի նշանավոր գրող, փիլիսոփա Ժան Ժակ Ռուսոն ասել է. «Մարդու դաստիարակությունն սկսվում է ծնվելուն պես, նա դեռ չի խոսում, դեռ չի լսում, բայց արդեն սովորում է: Փորձը նախորդում է ուսուցմանը»:

Այո, երեխայի մտքի աչքերը բացվում են ընտանիքում, որտեղից սկիզբ է առնում նոր մարդու կյանքի ճանապարհը: Եվ հենց ընտանիքում է առաջ գալիս այն հարցը, թե ծնողն ինչպես է հասկանում և կիրառում դաստիարակության ձևերն ու մեթոդները, որպեսզի այդ կյանքը, որ մեր երեխաներին է պատկանում, ընթանա ճիշտ հունով:

Երկար տարիների ընթացքում մանկավարժությունն ապացուցել է, որ երեխան դատարկ անոթ չէ, որի մեջ ինչ ցանկանաս, լցնես: Այստեղ ուզում են մեջբերել հայտնի մանկավարժ Մակարենկոյի դիպուկ խոսքերը. «Երեխան կյանքով լեցուն մարդ է: Դա ամենևին էլ մեր կյանքի դրվագը չէ, այլ առանձին լիարժեք և հարուստ կյանք է: Մանկական կյանքն իր հույզերի ուժով, տպավորությունների հուզականությամբ ու խորությամբ, կամային լարվածությամբ մաքրությամբ ու գեղեցկությամբ անհամեմատ ավելի հարուստ է, քան մեծահասակի կյանքը»:

Ամօխտելի է, որ երեխան ժառանգաբար ստանում է հատկություններ, որոնք ճիշտ մշակելով, կարելի է աստիճանաբար կատարելագործել: Եթե երեխայի դաստիարակությունն ինքնահոսի թողնվի, նա կարող է վայրենանալ՝ ինչպես վայրի պտուղը: Դրա համար պետք է ոչ թե բռնությամբ, այլ մտածված ձևով երեխայի բնավորության ամնշակ կողմերին տալ օգտակար ուղղություն:

Տարիների փորձը մեզ համոզում է, որ երեխաները մեծերից տարբեր մտածողություն, տարբեր զգացմունքներ ունեն: Ահա թե ինչու ծնողները մանկան հետ չպետք է վարվեն այնպես, ինչպես մեծերի հետ, նրան պահանջներ ներկայացնելիս պետք է հաշվի առնեն նրա տարիքային առանձնահատկությունները:

Ժողովրդի մեջ այսպիսի մի խոսք կա. «Ծառին պետք է մատուցել ժամանակ ուղղություն տալ»:

Այդ խոսքը լիովին վերաբերում է նաև մանկանը: Երեխային փոքր հասկանում ծնողը ինչ էլ սովորեցնի, օրինակ՝ ազնվություն, ճշմարտություն, ճարտարություն, բարություն և այլն, դրանք նրա մեջ որպես բնական կարողություններ ծնվում են, որոնց հետո արդեն կարելի է սովորեցնել:

Երեխան ինքնապաշտպանության հատկություններով չի ծնվում, բայց այդպիսի շուտ է ձեռք բերում: Քանի դեռ նա չունի կայուն գիտելիքներ և սեփական կարծիք, դյուրին է նրան համոզվել: Ուստի ծնողի և դպրոցի պարտքն է երեխային սովորեցնել ճշմարտը, արդարացին:

Երեխաներին ոչ միայն չպետք է վատ բան սովորեցնել, այլև չպետք է նրանց ներկայությամբ կեղծիք գործել, սուտ խոսել, որովհետև նրանք մեծանալով կան պիտի իմանան կեղծիքը և թշնամաբար տրամադրվեն դեպի կեղծողը, կամ էլ իրենք դառնան անազնիվ:

Երեխայի դաստիարակությունը անուր հիմքերի վրա դնելու համար ծնողները պետք է ծանոթ լինեն մանկավարժական որոշ դրույթների, որոնց մասին ես տեղեկացել եմ դեռևս ուսանողական տարիներին: Ուզում եմ ներկայացնել հենց այդ դրույթները սեփական լրացումների հետ միասին:

Առաջին հերթին նրանք պետք է ձգտեն, որ երեխաները ձեռք բերեն ազնիվ սովորություններ: Այդ նպատակով հարկավոր է գործի դնել երեխայի բոլոր կարողությունները: Ամենօրյա հետևողական պահանջ ներկայացնելով վարժեցնել աշխատանք կատարելու, անձնական հիգիենայի, հագուստի, կոշիկի խնամքի, առարկաները դասավորելու, անկողինը մաքուր պահելու, հարդարելու և այլ դրական սովորությունների մեջ:

Ընտանիքում է, որ երեխան ձեռք է բերում ճիշտ խոսելու կարողություն: Ծնողները պիտի հոգ տանեն երեխաների ոչ միայն ճիշտ հայերենով խոսելու մասին, այլև ուշադրություն դարձնեն նրանց խոսակցական լեզվի, օգտագործած բառերի, ձայնային ելևէջների, վայելուչ լինելու, բարեկիրք վարվեցողության, միտ ու կացի և այլ երևույթների վրա:

Ցավոք, մինչև այժմ էլ դեռ քիչ չեն այն ծնողները, որոնք երեխաների մեջ հետևողական կերպով ցանկացած լավ սովորություններ մշակելու փոխարեն օրական քսան անգամ դիտողություն են անում, բղավում երեխաների վրա, կոպտում, վիրավորում նրանց, իսկ որոշ անխիտ ծնողներ էլ դիմում են ֆիզիկական պատժի:

Երկրորդ պետք է առանձնահատուկ տեղ տալ երեխաների տարիքային առանձնահատկություններին: Տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչները նկատում են 6-8 տարեկան երեխաներն անչափ հարցասեր են: Դա աշխարհը ճանաչելու նրանց ձգտումն է, որը պետք է խրախուսվի և ոչ թե դատապարտվի:

9-10 տարեկան երեխաները մեծ մասամբ սիրում են առանձին խաղալ և խոսյա են տալիս խմբից: Նույնիսկ այդ տարիքի որոշ երեխաներ չեն ցանկանում ճանաչել ուրիշների իրավունքները, միակ իրավասու անձն իրենց են համարում: Բանիմաց ծնողը ժամանակին է նկատում իր երեխայի հոգեբանական փոփոխությունները, օգնության է կանչում դասվարին, մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպչին կամ ընկերներին և նրանց մասնակցությամբ երեխային աստիճանաբար ներգրավում կոլեկտիվի մեջ:

11-13 տարեկան հասակից սկսած՝ երեխաները սիրում են տարեկիցների խմբի մեջ մտնել, լինել փողոցում, աղմկել, ման գալ: Դա չպետք է վրիպի ծնողների տեսադաշտից: Նրանք պետք է անպայման դիմեն դպրոցի օգնությանը: Ավագ դպրոցի երեխաներն ավելի շատ սկսում են ուշադրություն դարձնել իրենց հագուստին, արդուզարդին և արտաքինին: Ծնողները պիտի կարողանան օգտվել այդ նոր հատկություններից, երեխաների մեջ ստեղծել իսկական մաքրասիրություն, ճաշակով հագնվելու կարողություն, վայելուչ սովորություն և այլն: Նրանք պետք է նաև

երեխաներին սովորեցնեն տարբերել կարևորը՝ երկրորդականից: Պիտի կարողանան նկատել իրենց տղաների ու աղջիկների պատանեկան տարիների փոփոխությունները: Աղջիկներն ավելի շուտ են հասունանում մտավորապես ու ֆիզիկապես, քան տղաները: Այդ պատճառով միևնույն տարիքում նրանց նկատմամբ վերաբերմունքը պետք է տարբեր լինի, նույն վերաբերմունքը կարող է վնասել թե՛ մեկին, թե՛ մյուսին:

Երրորդ դրույթը, որը նույնպես կարևոր է ծնողների համար, այն է, որ երեխաներին պետք է հեռու պահել վախի զգացման տիրապետությունից:

Ընտանիքում անվախ ու խիզախ երեխաներ դաստիարակելու համար ծնողներն ամենից առաջ իրենք պետք է անվախ լինեն: Երեխաները որքան շատ տեսնեն ծնողների լավ ու խիզախ արարքները, այնքան շատ կտոգորվեն հերոսականությամբ:

Զորորդ դրույթը վերաբերում է մարդու անձնավորության ու անհատականության դաստիարակմանը, որն ստեղծվում է դանդաղ, քայլ առ քայլ:

Անհատականության ու անձնավորության ձևավորմանը կարող են նպաստել երեխայի կեցվածքը, լիառնվածքը, համարձակությունը, ընտրություն կատարելու կարողությունը, կամքի որոշակիությունը, աշխատանքում ինքնավստահ լինելը, ինքնուրույն մտածելու հատկությունը, շրջապատի նկատմամբ բարեմիտ ու հարգալից վերաբերմունքը, սիրո, տաղանդի փայլատակումը և այլ հատկություններ:

Ուսուցիչներն ու ծնողները պետք է օգնեն երեխաների մեջ այդ հատկությունների արմատավորմանը: Դրա համար առաջին հերթին պետք է երեխային վաղ հասակից վարժեցնել ինքնուրույնության, չպետք է թույլ տալ, որ նա շարունակ ման գա մոր կամ մեծի փեշից բռնած: Երեխան չպետք է լինի եսապաշտ, նա պետք է ճանաչի և հարգի նաև ուրիշների իրավունքները: Իր կարիքները նա պետք է հոգա ոչ թե ուրիշներին հրամայելով, այլ խնդրելով:

Մենք՝ մանկավարժներս, գիտենք, որ մարդասիրության տեսության կարևոր սկզբունքը հարգանքն է երեխայի անձի ու նրա իրավունքների նկատմամբ:

Սա երեխայի մեջ մարդկայնության, բարության, հոգեկան նրբության

դաստիարակության կարևորագույն միջոց է: Զե՛ որ երեխան եթե մանկության տարիներին բարության, հարգանքի, իր զգացմունքների ըմբռնմանը չհանդիպի, ապա հետագայում հոգեկան ջերմության փոխարեն մարդկանց կվերադարձնի միայն անտարբերություն, չարություն, սառնություն:

Ահա թե այս մասին ինչ է գրել մի անհայտ հեղինակ.

- Եթե երեխան անընդհատ քննադատվում է, նա սովորում է մեղադրել:

- Եթե երեխան ծաղրանքի է ենթարկվում, նա դառնում է ամաչկոտ:

- Եթե շրջապատող աշխարհը թշնամանքով է վերաբերվում, երեխան պատրաստվում է պայքարի:

- Եթե երեխան ապրում է անթանկալի ենթարկվելով, ապա նրան չի լքում մեղքի զգացումը:

- Եթե երեխան ապրում է համաձայնությամբ, ապա նա համբերատար է լինում:

- Եթե երեխան խրախուսվում է քնքշորեն, նա վստահում է մարդկանց:

- Եթե երեխային արժանապատվորեն են վերաբերվում, նա սովորում է գնահատել:

- Եթե երեխան ապրում է ազնվությամբ, արդարամիտ է դառնում:

- Եթե երեխան ապրում է անվտանգության մեջ, սովորում է հավատալ:

- Եթե երեխան խրախուսվում է, սովորում է գնահատել իրեն:

- Եթե երեխան ընդունված է և բարեկամությամբ շրջապատված, նա սովորում է սեր գտնել այս աշխարհում:

Խոսքս ուզում եմ վերջացնել նշանավոր մանկավարժ Մուխոմլինսկու հետևյալ տողերով.

- Երեք պատուհան ունի մարդը՝ մահը, ծերությունը և վատ երեխաները: Ծերության ու մահվան հանդեպ ոչ ոք չի կարող ծածկել իր տան դռները, բայց վատ երեխաներից տունը կարող են պահպանել հենց իրենք՝ երեխաները, եթե նրանք ճիշտ դաստիարակություն են ստացել:

Եկեք ճիշտ դաստիարակություն և ճիշտ խնամք տանենք մեր երեխաների նկատմամբ, որպեսզի նրանք սեր գտնեն այս աշխարհում, սիրեն այս աշխարհը և նորեն կառուցեն այն:

Լաուրա ԱԼԹՈՒՅԱՆ  
Ֆադրուկո շոք, Մեծ Թաղերի միջև, դպրոցի հ. Լեզվի և գրակ. ուսուցչուհի, մանկապարտնեկան կոլեկտիվի կազմակերպիչ



ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅՈՒՆ

Ընկեր ունենալը մեծ բախտավորություն է: Ո՞վ չի ցանկանա, որ իր կողքին լինի մեկը, որն ամեն բոլոր պատրաստ է օգնության հասնելու՝ որքան էլ դա ջանքեր ու զոհաբերություն պահանջի: Բարեկամությունն ու ընկերությունը մեկ օրում չեն ծնվում: Շատ դժվար է իսկական, անկեղծ, անշահախնդիր ընկեր ունենալը: Երբ ծանոթանում ես մեծերի բարեկամության ու ընկերության պատմություններին, ամսմիջապես զգում ես, որ նրանք սերտ կապեր են հաստատել ոչ այն պատճառով, որ միմյանց ինչ-որ ձևով օգտակար ու անհրաժեշտ

են եղել, այլ պարզապես համակրել են ու հարգել մեկը մյուսին:

Զե՛ն հավատում, թե գտնվի այնպիսի մարդ, որ հոգեպես ընկերության ու բարեկամության պահանջ չունենա: Եթե կա նման մեկը, ապա, անկեղծ ասած, նրան հարկավոր է միայն ցավակցել ու խղճալ: Ցավակցել ու խղճալ ավելի շատ, քան Ռոբինզոն Կրուզոյին, որ քսանուր տարի ապրել է անմարդաբնակ կղզում: Այն մարդիկ, ովքեր հարգանք ու պատիվ ունեն շրջապատում, որպես կանոն՝ մարդամոտ են ու ընկերասեր: Ընկերը կարող է հավա-

սարապես կիսել իր վիշտն ու ուրախությունը: Հիշատակում եմ՝ հատկապես վիշտն ու ուրախությունը, որովհետև ընկերոջ, մտերմի մերկայության կարիք ենք զգում բնույթով այդքան տարբեր դեպքերում: Վշտի պահին ընկերը թեթևացնում է տխրությունը, իսկ երջանիկ պահին՝ կրկնապատկում ուրախությունը: Բարյացակամ վերաբերմունքը, համակրանքը և ուշադրությունը ոգևորում են, մղում նոր ու լավ գործերի: Իզուր չեն ասում, որ բարձր տրամադրություն ունենալիս մարդ ի վիճակի է լինվիլ բացահայտել իր ուժերն ու ունակու-

թյունները: Իսկական ընկերները միմյանց երբեք չեն թողնի փորձանքի մեջ, ամեն ինչ կանեն՝ օգնելու իրար:

Իսկական, ճշմարիտ ընկերը հանուն ընկերության, վտանգի տակ կդնի կյանքը՝ մարդու համար ամենաթանկը:

Մեր ազատամարտիկներն իսկական ընկերության վառ օրինակի մեծ խորհրդանիշ են, քանի որ նրանք իրենց կյանքը զոհել են նաև ընկերոջ փրկության համար:



ՎԵՐՋԻՆ ԷՋ

ЛИЧНОСТЬ ПИСАТЕЛЯ-СРЕДСТВО ВОСПИТАНИЕ УЧАЩИХСЯ

Современное общество развивается очень быстро. И перед школой ставятся все новые задачи по воспитанию молодого поколения.

ученику от побеждённого учителя" (Жуковский подарил Пушкину свой портрет с этой надписью).

Вольнолюбивые стихи Пушкина искрами разлетелись по всей России. Именно в эти годы за Пушкиным упрочивается слава поэта-вольности.

Ребята читают его стихи, отрывки из поэмы "Руслан и Людмила".

В образе Руслана Пушкин стремится воссоздать черты русского богатыря; смелость, силу, патриотизм.

Александр I, взбешенный деятельностью Пушкина, его популярностью, хочет сослать его в Сибирь.

"Чтение-вот лучшее ученье",- указывал Пушкин брату.

В Михайловском развивался и окреп зародившийся ещё в детстве интерес Пушкина к народному творчеству.

В своих ответах по стихам Пушкина, учащиеся подчёркивают силу духа, стремление к свободе, к свету.

Пушкин остался верен своим ссыльным друзьям. Своею неразрывную связь с ними поэт подчёркивает в стихотворениях "19 октября 1827г", "Арион", "В Сибирь", "К Чаадаеву".

Учащиеся также читают его стихотворения наизусть. Жестокому и безразравственному миру прот и в о п о с т а в л я ю т с я милосердие, любовь, сострадание, благородство.

На примере Пушкина мы воспитываем свой характер, волю, трудолюбие.

На втором уроке учащиеся знакомятся с его романами.

"В наше время под словом роман разумею историческую эпоху, развитую в мыслённом повествовании",- писал Пушкин.

Широкое вступление в прозу начинается с "Повестей Белкина".

"Капитанская дочка" была впервые напечатана в "Современнике" ещё при жизни поэта.

В повести раскрыт широкий размах движения, его народный и массовый характер.

Пушкин глубоко раскрыл образ Пугачёва. Ему свойственны недоверие и недоброжелательство ко всякому "барину", хотя бы этом барин был на стороне его.

Учащиеся прочитывают отрывки. Подчёркивают добродушие и простодушие Пугачёва.

Образ Савельича, преданного своим господам, нужен был для изображения и с т о р и ч е с к о й действительности того времени.

Образ Савельича - качество "добраго народа". Все лучшее, что есть в Гринёве, создано преимущественно Савельичем.

Пушкин своей повестью будил "чувства добрые к народу".

Один из учеников читает

отрывок, где Пугачёв хочет уговорить Гринёва перейти на его сторону. Как Гринёв, не стращаясь, благородно и честно объясняет причину своего несогласия.

Учащиеся характеризуют Машу: простая с чистым сердцем, мужественная.

Подчёркивается гуманизм Пушкина. Его отношение к жизни многих народов. Поэт рисовал нравы цыган, горцев Кавказа, обычаи и характеры жителей Грузии.

В конце урока зачитывается его стихотворение "Памятник".

Заканчиваем урок словами Белинского: "Пушкин принадлежит к вечно живущим и движущимся явлениям, не останавлевающийся на той точке, на которой застала их смерть, но продолжающим развиваться в сознании общества."

Анаит БАГИЯН
Учительница русского языка и литературы
Туминской средней школы

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴՅ ՌԵՎԿՏՈՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը հայտարարում է բաց մրցույթ՝ «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ղեկավարի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Համալսարանի ղեկավար կարող է ընտրվել կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ և գիտական աստիճան (կամ) գիտական կոչում ունեցող անձը:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվում են հետևյալ փաստաթղթերը՝

ա) ինքնաառաջադրման դեպքում՝ դիմում (ԼՂՀ կրթության և գիտության նախարարի անունով), իսկ համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից առաջադրվելու դեպքում՝ կառուցվածքային ստորաբաժանման առաջադրման մասին որոշումը և առաջադրվելու՝ հավակնորդի գրավոր համաձայնությունը,

բ) լուսանկար՝ 3x4 չափսի, գ) քաղվածք աշխատանքային գրքուկից, դ) ինքնակենսագրություն,

ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճեն, գիտական աստիճանը (և կամ) գիտական կոչումը հաստատող վկայականների պատճեններ,

զ) կարգերի հաշվառման անձնական թերթիկ,

է) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից,

ը) հրատարակված գիտական աշխատանքների ցուցակ,

թ) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե այն գործում է),

ժ) հավակնորդի գործունեության ծրագիր՝ փակ և կնքված փաթեթով:

Մրցույթին մասնակցելու համար դիմումները (փաստաթղթերը՝ բնօրինակներով) ներկայացնել 2013 թ. հուլիսի 4-ից մինչև օգոստոսի 3-ը՝ ժամը 17.00-ն (բացի շաբաթ և կիրակի օրերից), Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության մասնագիտական կրթության և գիտության բաժին:

Հասցե՝ ք. Ստեփանակերտ, Թումանյան 62, հեռախոս՝ 047-94-11-39:

Մրցույթը տեղի կունենա 2013 թվականի օգոստոսի 14-ին, ժամը 12.00-ին, Արցախի պետական համալսարանի շենքում:

ԱՍԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԱՐՅԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ ՌԻՍՈՒՄԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է 2013-2014 ՌԻՍՈՒՄԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՅԵՏԵՎՅԱԼ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Table with 2 columns: ID and Description of subjects. Includes subjects like 'Պատմություն', 'Ֆիզիկա', 'Գրականություն' etc.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒՍԱՐԱՐ
Խմբագիր՝
ՍԵՏԼԱՆԱ ԽԱՉՍՏՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 111, 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպագրական 3171: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 04.07.2013թ.: